

# **«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

## **Հոդված 1. Օրենքի նպատակը**

Սույն օրենքի նպատակը «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության առաջին Էներգաբլոկը շահագործումից հանելու գործընթացի (այսուհետ՝ շահագործումից հանելու գործընթաց) ապահովումն է:

## **Հոդված 2. Շահագործումից հանելու գործընթացի իրականացումը**

Շահագործումից հանելու գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի և Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխան:

## **Հոդված 3. Անվտանգության պահանջների ապահովումը**

Շահագործումից հանելու գործընթացն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության կառավարությունը ապահովում է միջազգային կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը և Հայաստանի Հանրապետության միջուկային ու ճառագայթային անվտանգության նորմերի պահանջները:

## **Հոդված 4. Շահագործումից հանելու ռազմավարության մշակումը**

Շահագործումից հանելու ռազմավարությունը մշակում և դրան հավանություն է տալիս Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## **Հոդված 5. Հասարակությանը տեղեկատվության տրամադրումը**

Շահագործումից հանելու գործընթացի իրականացման ընթացքի մասին հասարակությանը և բնապահպանական կազմակերպություններին պարբերաբար տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## **Հոդված 6. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: